ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-635-10.10.2014-ԱՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն մասով սահմանված 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժում սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները չեն հաշվառվում:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն մասով սահմանված աշխատանքային ստաժում սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները չեն հաշվառվում:»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում «Ուսումնական» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ ռազմական ուսումնական)» բառերը:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե իրավասու պետական մարմինը, զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ: Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելը ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ժամանակահատվածները» բառից հետո լրացնել «, բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամների՝ (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության ներգրավված լինելու ժամանակահատվածների» բառերը.

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «, անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու» բառերը:

Հոդված 7. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Աշխատանքային ստաժը հաստատող արխիվային տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում, լիազոր մարմինը հարցման միջոցով ստանում է պետական արխիվից, եթե դիմումին կից ներկայացվել են հարցման համար անհրաժեշտ տվյալներ: Հարցման համար անհրաժեշտ տվյալների ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 8. Օրենքի 33-րդ հոդվածը՝

1. 1-ին մասի 1-ին նախադասությունում «տվյալների» բառից հետո լրացնել «, բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի» բառերը, իսկ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը նշանակելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

2. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Առաջին խմբի հաշմանդամի կենսաթոշակ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունում «ստացող կենսաթոշակառուն» բառերից հետո լրացնել «(անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը)» բառերը.

Հոդված 10. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունից հանել «, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» բառերը:

Հոդված 11. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Կենսաթոշակի տեսակը փոխվում է, եթե կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի այն տեսակի իրավունքը, որի համար դիմել է:»:

Հոդված 12. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «առնվազն վեց ամիս» բառերը.

Հոդված 13. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում» բառերը փոխարինել «յուրաքանչյուր ամիս հաշվառվում են կենսաթոշակի էլեկտրոնային գործում» բառերով, իսկ «կարգով» բառը հանել:

Հոդված 14. Օրենքի 41-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 4-րդ կետում «6-րդ» բառը փոխարինել «5.1-ին» բառով.

2. 2. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ կետով.

«2.2) եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուն տասներկու ամիս անընդմեջ բացակայում է Հայաստանի Հանրապետությունից (կենսաթոշակը կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին վճարվելու դեպքում).».

3. 3-րդ մասի 8-րդ կետում «և 13-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով.

4. 4-րդ մասի 1-ին կետում «անձամբ» բառից հետո լրացնել « , իսկ 2-րդ մասի 2.2-րդ կետի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից՝ օրինական ներկայացուցիչի գրավոր դիմումի հիման վրա, եթե կենսաթոշակառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում» բառերը:

5. 5-րդ մասում «հասցեում» բառից հետո լրացնել «, բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի» բառերը:

Հոդված 15. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում «մահվան» բառից հետո լրացնել «դեպքում» բառը:

Հոդված 16. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի.

1. 1-ին կետի «գ» ենթակետում «սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը» բառերով.

2. 3-րդ կետի «գ» ենթակետում «եկամտի» բառից հետո լրացնել «(եթե առկա է)» բառերը:

3. 4-րդ կետի «բ» ենթակետից հանել «եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և» բառերը:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 7-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մարտի 1-ին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 15-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
1.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության մեջ «Աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող՝» բառերը առաջարկում ենք փոխարինել «Առաջին խմբի» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով (ներկայացվող տարբերակում՝ 8-րդ հոդվածի 2-րդ մասով) առաջարկվող փոփոխության մեջ «Աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող՝» բառերը փոխարինվել է «Առաջին խմբի» բառերով:
2.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր դրույթներով՝ նպատակ ունենալով. 1) հստակեցնել աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը (տարիքայինի համար՝ 10 տարի, հաշմանդամության դեպքում՝ ըստ սանդղակի) հաշվարկելու կարգը.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթներով: Մասնավորապես, ներկայացվող տարբերակով համապատասխան լրացումներ են կատարվում Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում և 12-րդ հոդվածի 1-ին մասում (տես ներկայացվող տարբերակի 1-ին և 2-րդ հոդվածները):
3.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	2) պարզեցնել (հստակեցնել) ռազմական ուսումնական հաստատությունում սովորող կուրսանտի կերակորդին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունքը, ինչպես նաև կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակելու և վճարելու ընթացակարգերը, այդ թվում՝ 3) սահմանել, որ այս դեպքում կենսաթոշակը նշանակվում (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է և կենսաթոշակ վճարելը վերսկսվում է)՝ անկախ բնակչության պետական ռեգիստրում ՀՀ-ում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքից, 4) Հայաստանի Հանրապետության կառավարությանը տալ լիազորություն՝ սահմանելու ռազմական ուսումնական հաստատությունում սովորող կուրսանտին կենսաթոշակը նշանակելու առանձնահատկությունները.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթներով, որոնցով անհրաժեշտ փոփոխություններ են կատարվում Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունում, 41-րդ հոդվածի 5-րդ մասում (ներկայացվող տարբերակի 3-րդ հոդված, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 14-րդ հոդվածի 5-րդ մաս):
4.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/	Առաջարկում ենք հստակեցնել հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմաններն ու կարգը՝ կենսաթոշակի իրավունքը փոխկապակցելով հաշմանդամության պատճառական կապի մասին ռազմաբժշկական (բժշկական) հանձնաժողովի եզրակացությունը (որոշումը) տալու ժամկետներին.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվում է նոր խմբագրությամբ: Ընդ որում, նոր խմբագրությունում հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 46-Ն որոշմամբ հաստատված կարգը

հ/հ	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
	Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/		(ներկայացվող տարբերակի 4-րդ հոդված):
5.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք հստակեցնել ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամների՝ (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության ներգրավված լինելու ժամանակահատվածները աշխատանքային ստաժում ներառելու հարցը (բացառելով ընտանեկան ձեռնարկատիրության կողմից որևէ լրացուցիչ պարտավորություն սահմանելը).	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով հստակեցվում է ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված անձի ստաժի խնդիրը (ներկայացվող տարբերակի 5-րդ հոդված):
6.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք նախագծով ապահովել անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու ժամանակահատվածները աշխատանքային ստաժում հաշվառելը՝ անկախ վճարված եկամտային հարկի գումարի չափից՝ համապատասխան փոփոխություններ կատարելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասում (գործող իրավակարգավորումների համաձայն՝ տարեկան նվազագույն եկամտային հարկի գումարի չափից պակաս եկամտային հարկ վճարած լինելու դեպքում աշխատանքային ստաժը համամասնորեն պակասեցվում է).	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասից հանվում են «, անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու» բառերը (ներկայացվող տարբերակի 6-րդ հոդված):
7.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք Օրենքով սահմանել, որ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու դեպքում՝ տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջը վերաբերում է կենսաթոշակառուի օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունում կատարվում է համապատասխան լրացում (ներկայացվող տարբերակի 9-րդ հոդված):
8.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք Օրենքից հանել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1167 որոշմամբ Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր ճանաչված օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը՝ սահմանված 6-ամսյա ժամկետը բացթողնելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը ժառանգման ենթակա լինելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում ներկայացնելու վերաբերյալ.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքից հանվում են ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1167 որոշմամբ Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր ճանաչված օրենքի դրույթը՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունից հանելով «, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» բառերը (ներկայացվող տարբերակի 10-րդ հոդված):
9.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան	Առաջարկում ենք հստակեցնել կենսաթոշակի տեսակը փոխելու կարգը՝ սահմանելով, որ կենսաթոշակի տեսակը փոխելու համար կենսաթոշակառուն պետք է ունենա կենսաթոշակի այն տեսակի իրավունքը, որի համար դիմել է.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում կատարվում է լրացում: Սահմանվում է, որ կենսաթոշակի տեսակը փոխվում է, եթե կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի այն տեսակի

հ/հ	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
	/014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/		իրավունքը, որի համար դիմել է (ներկայացվող տարբերակի 11-րդ հոդված):
10.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք հանել տարիքային կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակները նշանակելուց (դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակը վերահաշվարկելու համար դիմելու դեպքում առնվազն վեց ամիս աշխատած լինելու պայմանը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով Օրենքի 38-րդ հոդվածում.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանվում են «առնվազն վեց ամիս» բառերը (ներկայացվող տարբերակի 12-րդ հոդված):
11.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք հստակեցնել մանկատանն ապրող երեխային վճարվող կենսաթոշակի գումարների հաշվառման կարգը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշիվը չի հանդիսանում բանկային հաշիվ.	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում» բառերը փոխարինվում են «յուրաքանչյուր ամիս հաշվառվում են կենսաթոշակի էլեկտրոնային գործում» բառերով, իսկ «կարգով» բառը հանվում է (ներկայացվող տարբերակի 13-րդ հոդված):
12.	Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/ Արմեն Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վրեժ Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռուբեն Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք՝ Հայաստանի Հանրապետությունից տասներկու ամիս անընդմեջ բացակայելու դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցնելն ապահովող մեխանիզմներ սահմանող առկա իրավակարգավորումների շրջանակում ընդգրկել նաև անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուներին:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է համապատասխան դրույթով, որով Օրենքի 41-րդ հոդվածում կատարվում են համապատասխան լրացումներ (ներկայացվող տարբերակի 14-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր):

հ/հ	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
13.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ նպատակ ունենալով օրենքում կիրառվող եզրույթները համապատասխանեցնել գործող օրենսդրությանը. «Հոդված __. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի. 1. 1-ին կետի «գ» ենթակետում «սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը» բառերը փոխարինել «հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը» բառերով. 2. 3-րդ կետի «գ» ենթակետում «եկամտի» բառից հետո լրացնել «(եթե առկա է)» բառերը: 3. 4-րդ կետի «բ» ենթակետից հանել «եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և» բառերը:»:	Ընդունվել է (ներկայացվող տարբերակի 16-րդ հոդված): Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
14.	ՀՀ կառավարություն	Օրենքի 41-րդ հոդվածի՝ 1-ին մասի 4-րդ կետում «6-րդ» բառը փոխարինել «5.1-ին» բառով, իսկ 3-րդ մասի 8-րդ կետում «և 13-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով:	Ընդունվել է (ներկայացվող տարբերակի 14-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր): Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
15.	ՀՀ կառավարություն	Վերանայել նախագիծն ուժի մեջ մտնելու ժամկետները:	Ընդունվել է: Նախագիծն ուժի մեջ մտնելու դրույթները վերանայվել են (ներկայացվող տարբերակի 17-րդ հոդված):

հ/հ	Հեղինակ	Առաջարկությունը	Եզրակացություն
16.	ՀՀ կառավարություն	Խմբագրել նախագծի 1-ին և 3-րդ հոդվածները, հստակեցնելով, որ արխիվային հարցումները լիազոր մարմինը կատարում է պետական արխիվից՝ ըստ անհրաժեշտության՝ աշխատանքային ստաժը հաստատելու նպատակով: Միաժամանակ,հստակեցնել 44-րդ հոդվածում 1-ին մասում առաջարկվում փոփոխությունը:	Նախագծի 1-ին հոդվածի (ներկայացվող տարբերակում՝ 7-րդ հոդվածի) առաջին նախադասությունում «3. Սույն մասով սահմանված դեպքում արխիվային տեղեկանքը հարցման միջոցով ստանում է լիազոր մարմինը» բառերը փոխարինվել են «Աշխատանքային ստաժը հաստատող արխիվային տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում, լիազոր մարմինը հարցման միջոցով ստանում է պետական արխիվից» բառերով, իսկ նախագծի 3-րդ հոդվածով (ներկայացվող տարբերակում՝ 15-րդ հոդվածի) Օրենքի 44-րդ հոդվածում նախատեսվող փոփոխությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում «մահվան» բառից հետո լրացնել «դեպքում» բառը»: